ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆ ԿԱՐԵՆ ՂԱԼՈՒՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԵԼ Է ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

03.05.2019 15:52

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 29.04.2019թ. որոշմամբ փաստաբան, հանրային պաշտպան Կարեն Ղալումյանի վարքագիծը ստուգելու նպատակով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական վարույթի հարուցման առիթ է հանդիսացել ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի 29.03.2019 թվականի միջնորդությունը (դիմումը), որով վերջինս հայտնել է, որ թիվ 58212117 քրեական գործով մեղադրյալ Կարեն Էրոյանցի պաշտպան Կարեն Ղալումյանը 2019 թվականի մարտի 21-ին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում, երբ մեղադրյալը հայտարարել է, որ հրաժարվում է հանրային պաշտպանից, վերջինս հանդես է եկել հայտարարությամբ, որի բովանդակությունն առերևույթ հակասում է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի դրույթներին:

Կարեն Ղալումյանի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2, 2.2.3, 2.6.1 և 3.5.3 ենթակետերի խախտման հատկանիշներով:

ՀՀ փաստաբանների պալատը հիշեցնում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })